ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/119

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.05.2021թ. թիվ 26/26-1/7064-2021 գրությամբ «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 30.04.2021թ. թիվ 3/27/26986-21 գրության հիման վրա, 06.05.2021թ. թիվ 26/26-1/7064-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.05.2021թ. թիվ Ե-05-238 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից սույն թվականի ապրիլի 12-ին policetv.gnumner@mail.ru էլ. փոստի և armeps համակարգի միջոցով «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին ներկայացվել է N 1 համաձայնագիրը և պահանջվել է, որ լրացվի վավերապայմանները, կնքվի, ստորագրվի և 2 օրինակից ներկայացվի ՀՀ ՈՍ Նալբանդյան 130 հասցեով, սակայն 29.04.2021թ. լուծվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գնման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր) այն հիմքով, որ սահմանված ժամկետում Ընկերության կողմից N 1 համաձայնագիրը չի ստորագրվել:

Ընկերությունը վկայակոչել է Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը և հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է նշված ենթակետով սահմանված պահանջը:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 29.04.2021թ. Պայմանագրի լուծման օրը դեռևս լրացած չի եղել իրավական ակտով սահմանված 15 աշխատանքային օրվա ժամկետը, հետևաբար Պատվիրատուի կողմից պայմանագրի լուծելը իրավաչափ չէ, ուստի նաև իրավաչափ չէ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆիանանսների նախարարության նախաձեռնած ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/119 ընթացակարգի շրջանակներում 11.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.04.2021թ. թիվ 3/27/26986-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԱՐԹ

ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, արձանագրությունները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագիրը, 12.04.2021թ. ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագիրը կնքելու վերաբերյալ ծանուցման էկրանի հանույթը՝ գնման գործընթացին մանակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/119 ընթացակարգի շրջանակներում 11.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 24.03.2021թ. կնքվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գրավոր թարգմանության /տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական քննության հարցերի թարգմանություն/ ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ստանձնել է գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո 10 օրյա ժամկետում:

4. Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն էլ. փոստի և armeps էլեկտրոնային գնումների

համակարգի միջոցով ապրիլի 12-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1 համաձայնագրը՝ սահմանված ժամկետում ստորագրելու, կնքելու և ՀՀ ոստիկանությանը ներկայացնելու նպատակով:

5. «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին ուղղված 29.04.2021թ. թիվ 27/443 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ոստիկանության և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի միջև ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի մարտի 24-ին կնքված պայմանագրի 7.5 և 7.13 կետերի՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 12.04.2021թ. «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին ուղարկվել է թիվ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը՝ սահմանված ժամկետներում կնքելու, ստորագրելու և ՀՀ ոստիկանությանը ներկայացնելու նպատակով: «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարտավոր էր մինչև 2021 թվականի ապրիլի 26-ը ներկայացնել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը:

Տեղեկացնում եմ, որ սահմանված ժամկետում «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը:

Հիմք ընդունելով՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն զրկվում է համաձայնագրերը ստորագրելու իրավունքից և կնքված Պայմանագիրը միակողմանի լուծվում է»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 29.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 06.05.2021թ. թիվ 26/26-1/7064-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 30.04.2021թ. թիվ 3/27/26986-21 գրությունը և կից

փաստաթղթերը, «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ

հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա,*** սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ***ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով:*** Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է ***համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:*** Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.

Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանվում է, որ ***Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպես, ՀՀ ոստիկանության և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 24.03.2021թ. կնքվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» ծածկագրով գրավոր

թարգմանության /տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական քննության հարցերի թարգմանություն/ ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն ստանձնել է գրավոր թարգմանության ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից***՝ 20 օր հետո 10 օրյա ժամկետը:

Պայմանագրի շրջանակներում ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված Պատվիրատուն էլ. փոստի և armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ապրիլի 12-ին Ընկերությանն է ուղարկել Պայմանագրի թիվ 1 համաձայնագրը՝ սահմանված ժամկետում ստորագրելու, կնքելու և ՀՀ ոստիկանությանը ներկայացնելու նպատակով:

«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին ուղղված 29.04.2021թ. թիվ 27/443 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը.

«Համաձայն ՀՀ ոստիկանության և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի միջև ՀՀ ոստիկանության կարիքների համար 2021 թվականի մարտի 24-ին կնքված պայմանագրի 7.5 և 7.13 կետերի՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 12.04.2021թ. «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին ուղարկվել է թիվ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ» պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը՝ սահմանված ժամկետներում կնքելու, ստորագրելու և ՀՀ ոստիկանությանը ներկայացնելու նպատակով: «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարտավոր էր մինչև 2021 թվականի ապրիլի 26-ը ներկայացնել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը:

Տեղեկացնում եմ, որ սահմանված ժամկետում «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից կնքված և ստորագրված համաձայնագրերը:

Հիմք ընդունելով՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն զրկվում է համաձայնագրերը ստորագրելու իրավունքից և կնքված Պայմանագիրը միակողմանի լուծվում է»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 29.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված 12.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը՝ առաջարկելով սահմանված ժամկետում կնքել, ստորագրել և ներկայացնել ՀՀ ոստիկանությանը, այնուհետև՝ մինչև Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանված 15 աշխատանքային օրը լրանալը, այն է՝ 30.04.2021թ., լուծել է Պայմանագիրը:

Մինչդեռ Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանվում է, որ ***<u>Կատարողը համաձայնագիրը կնքում</u>, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու <u>ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում</u>: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, ***<u>որ Պատվիրատուն, 29.04.2021թ. 15 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում լուծելով Պայմանագիրը, խախտել է Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով և Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանված պահանջները,</u>*** ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.05.2021թ. թիվ 26/26-1/7064-2021 գրությամբ «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**